

Սմբատ Բիւրատ
Խմբագրութիւն «Փիիւնի»,
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Նր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՇԱՐԵԿԱՆ ՔԱՂ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐՆ.Թ 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԹԻՒ 28

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեզիֆճի)

Բ.

Դպրոցական Տարիները

(Շար. ԻՆ. քիւէն)

Ա՛լ մտանցած էին զինք եւրոպա
զրկելու օրերը: Մայրը վերջապէս ու
րոշած էր ու վճռած Բարիզի մէջ
պատրաստել շաւլ ան.ար կրթութիւնը,
հաստատուն կրթութիւն մը, կանուխ
հասակէն Կարայի մէջ գտնելով ուսման
անզուսպ եռանդ մը, աշխատելու յա
մառ ողի մը, մտքի արտակարգ ուժ
մը: Արդէն խիստ բարձր գաղափար
մ'անէր ապագային վրայ Կարայի, ու
րուն վրայ դրած էր իր ոսկեղէն յոյ
սերը. իր մտատիպարն եղաւ անի ու
մտահոգութեան սիրուն ու թանկագին
առարկան, իրականացումն իր մեծ եւ

րազին. ուստի ինք իրեն գործ ու
պաշտօն ըրաւ օժտել զանի անստգիւտ ու
անողջ դաստիարակութեամբ մը, որուն
համար յօժարակամ պիտի զոհէր իր
բոլոր հարստութիւնը, ինչպէս նաև իր
միւս երկու փոքրիկներուն, Մարտի
րայի ու Գրիգորի համար: Կարօ, թէ
և շատ մատաղ ու անտիակա՞, բայց
գուրգուրանքի ու գորսվի ցոլքեր
սկսած էր կարգալ այն այրենի նայ
ուածներուն մէջ, որոնք կուգային
սեւեռիլ ու կառչիլ իր վրայ. նայ
ուածներ, որոնք ընդհանրապէս կ'ար
տայայտուէին խանդաղատանքի տաք
տաք համբոյրներով, Կարայի թարմ
այտերուն վրայ դրոշմուած: Կարա
լած էր աչդէն ամեն բան ու
սիրտը կը տրոփէր անհուն հրճուան
քով մը: Բարիզի հեռանկարը, ամե
նագեղ դիցուհիի մը պէս, ա՛լ աւելի
հրապուրիչ, ա՛լ աւելի դիւթական ու
մոգական հմայք մ'սկսած էր ներշն
չել անոր մատաղ երեւակայութեան:
Հասաւ հրաժեշտի սպասուած օրը,
Կ. Պոլսէն մեկնեցան 1880 Սեպտեմբ.

բերին: Առաջին երկայն ծովային ճամբորդութիւնն էր այս, որ Կարայի հետադասող մտքին համար եղաւ առատ աղբիւր մը: Փոքրի՛ջ աշխարհացոյց քարտէս մ'ունէր հայերէն, որմէ կարելի չ'էր զինք բաժնել այդ քարտէսը ձեռքը, յաճախ կ'ելնէր իր խուցէն, շոգենաւին եզերքը, կը թաղէր իր նայուածքը կապոյտ տարածութեան խորը, ու ամէն անգամ որ աչքին հանդիպէր հրուանդան մը, կզզի մը կամ քաղաք մը, որ նշանակուած ըլլար իր այդ քարտէսին վրայ, կը վազէր հրճուագին մօրը քով ու կը հաղորդէր անոր իր զգացած անբացատրելի հաճոյքը, նոր աշխարհ մը գտած ըլլալու հպարտ գոհունակութիւնը... Ամբողջ ծովին վրայ, իր անբաժան ընկերն եղաւ այդ քարտէսը, մինչև որ Մարսիլիա խարսխեց շոգենաւը. ինչ մեծ եղաւ սակայն փոքրիկ աշխարհագրին վիշտը, երբ յանկարծ նշմարեց որ իր սիրական քարտէսը քովէն անհետացած էր. ու թափեց մանկային անկեղծ ու առատ կաթիլներ արցունքի, այդ կորսուած գանձին վրայ:

Մայրը դրաւ Կարան Բաշիզի մօտ Արգէօյլի դպրոցը, որուն հիմնադիրն էր Հայր Լագորսէր, և ոչուն վարչութիւնը յանձնուած էր գօմինիկեան հայրերուն, որոնց մէջէն Հայր Տիտոն եղաւ ճնորէն այդ վարժարանին, իր կեանքի վերջին տարիներուն մէջ:

Կարա շուտով սիրուեցաւ իր ուսուցիչներէն, որոնցմէ մին, իր մատղաշ աշակերտին վրայ դիտած նշանակելի ձիւքերէն դիւթուած, անոր եօթը տարիներու ուսումնառութեան ընթացքին մէջ կ'ուզէր յաճախ այս խօսքը. «Կեանքի նպասակդ Հայաստանը պիտի ըլլայ»:

Գուշակութիւն, որ կէտ առ կէտ պիտի կատարուէր:

Իր կարգին մէջ միշտ առաջին մըրջանակը կ'առնէր: Սակայն, մանաւանդ

սկիզբները, շատ տառապեցաւ, յանկարծ տեղափոխուած գտնելով ինքզինք տաքաշխարհիկ, իրեն համար բոլորովին նոր ու օտար միջավայր մը: Զօսանքի մէջ իր ընկերակիցներուն ազնուակից ժխտներէն բնաւ չ'էր ախորժեք ու կ'ըսէր իր մօրը. «Անգամ մը յաջողէի անցնիլ փոքրիկ կարգէն միւսը, պիտի կրնամ գրօսանքներուս հաճոյքը վայելել, իմ խաղաղասէր ճաշակներուս համեմատ խօսելով ու զուարճանալով:» Եւ որովհետեւ Ֆրանսերէն դեռ չ'էր դիտեր, դիմած էր գերմաներէնին, որով կը ջանար իր միտքը բացատրելու, առանց դժուարութեան. — գերմանացի սպասուհի մ'ալ պահած էին տան մէջ: Սակայն գերմաներէնը պատճառ եղաւ որ զինք գերմանացի կարծէին իր ընկերակիցները, փոքրիկ Ֆրանսացիներ, որոնք Հայր Գերմանէն չ'էին կրնար ոչոչել այն խիստ բնական պատճառով որ Հայր Զարդերէն վերջն է որ ծանօթացաւ Եւրոպային: — Ազգայնութեան այս շփոթութեան անմիջական հետեանքն եղաւ նախ խուլ հակակրանք մը, յետոյ հալածանք մը, Կարայի դէմ, փոքրիկ ընկերակիցներուն կողմէն, որոնք թունաւորուած էին արդէն 1870ի Ֆրանկօգերման պատերազմին կտակած բուռն վրէժխնդրութեան ոգիովը: —

Ճակատագրային այս բոլորը պէտք էր որ Կարա տառապէր նախապէս, վաղժուէր ու կռուէր տառապանքի դպրոցին մէջ, ու նախապատրաստուէր մարտիրոսութեանը, որպէս զի յետոյ իրաւունք ունենար ըլլալու Տիգրան Երկար մը:

Հաւանական է թէ այդ հալածանքին կը պատի Կարա իր հոկայաքայլ յառաջդիմութիւնը Ֆրանսերէնի մէջ, զոր ուխտեց սովորելու, և լաւ սովորելու, որպէս զի գերմանացի կտրծուելու անարդանքէն ազատուէր. այդ օրէն դադարած էր գերմաներէն խօսակցելէ իր այդ փոքրիկ հայրենամուլ ըն-

կերակրիցներուն հետ, որոնք ապագային պարծանքով ու հպարտութեամբ մը պիտի յիշէին այդ փոքրիկ Հայուն հետ անցուցած իրենց դպրոցական բարեշատիկ տարիները: Ամառնային պարապորդի ամիսները կուգար անցնել և Պոլիս իր ընտանեկան յարկին տակ այդ մէկ երկու ամիսները նորոգումի վերադարձումի շրջանը կրնան համարուիլ Կարայի պատանեկան քաղցրագոյն ներշնչումներուն, սլացքներուն ու երազներուն: Վոս իորի ծիծաղագեղ տեսարանները հոն էին, աւելի՛ գեղեցկացած ու աւելի՛ խօսուն, մանկային անմեղ կայտուններուն ու խաղերուն զովարացի վերյուշումը՝ տեսակ մը կազդուրում կը բերէր անոր խնշած իմացականութեան, կը սիրէր երթալ յաճախ մենանալ ծիրանի ծովին երկայնքը պառկած մթնահանաչ մարմանդներուն կռնակը, գալարի դարեանդներուն կոշերը, հովասուն հովիտներուն գոգը:

Իսկ Ծնունդի ու Զատիկի սօճուկան օրերը կ'անցնէր Բարիդ, իր մօշը բարեկամութիւններուն քով, ոչոնց մէջ առաջնակարգ տեղը կը բռնէ Նօայի գերգաստա՛ր, որուն պետը Մարի Տր Նօայ, և Պոլսոյ նախկին գեսպան, արդի գեսպանն է Պերլինի:

Ծնունդի ու զատկական օրերուն Կարայի այցելած տուններուն մէջէն նշանաւոր է Տիկին Ժագօրսինը, Պօղոս պէյ Տիկի աղջիկն ու Տիկին Պիլէզիքի մը տերիմ բարեկամուհին. Տիկին Ժագօրս Պօնաբարթեան անուանի ընտանիքի մը հետ խնամութիւն հաստատած էր, Բարիդ կը բնակէր մշտապէս: Պօնաբարթեան այս շրջանակին մէջ ուր կ'ապրէր, աչքի զարնող նմանութիւն մը կը գտնէին տղայ Կարապետին ու Նաբօլէոն Գ. ի միածին տղուն, կայսերազուն իշխանին միջև, որուն եղբրական վախճանը Զորաշէնսի մէջ մուսուսած չէ տակաւին: Եթէ այդ անհետացած երկու գէմբերուն մէջ սերտ նմանութիւն մը նշմա-

րողները կ'ապրին գեռ, չ'պիտի նաեւ հաստատեն թէ այդ երկու քոյր հոգիները կը նմանին իրարու նաեւ իրենց մահովը, ծաղիկ հասակի մէջ...:

Հաւասարապէս կ'ընդունուէր Մարքի Տը Նօայի ընտանիքին մէջ իբրև ուղի մը միշտ սիրուած ու փնտռուած: Ինչպէս կ'երևի, Կարա բարիգեան բաշտքը ու տոհմիկ կեանքին հետ շփուած էր տղայ տիքէն վեր. աշխարհ մը որուն մուտքը կամ մերձեցումը ա՛յնքան դժուար է օտարներուն համար: Այդ նախնական շփումներուն կը պարտի արդէն ընդարձակ յարաբերութիւնները, զոր ինք մշակեց յետոյ:

Բարձրագոյն կարգերն երբ որ անցաւ, իր զբօսանքի ժամերէն կ'օգտուէր գրելով թատերախաղ մը, որուն «Նաքաշի իշխանուհի» տիտղոսը սուաւ: Այս եղաւ իր առաջին գրական արտադրութիւնն իր առոյգ երեակայութենէն ներշնչուած. բայց յետոյ, կորսնցուց գեղադարար այս շահեկան երկը: Տարաբարգ մայրը անոր վերջին հիւանդութեան ատեն ի Բրիկի իքօ հարցուց իրեն թէ կը յիշէ՞ր իր Արդէօյի «Նաքաշի իշխանուհի»ն, հիւանդը տարտամ ու աղօտ յիշատակը միայն պահած էր անոր:

Զբօսանքի մէջ ուսուցիչները կը զուարճանային շաքարներնետելով բակին մէկ ծայրը, և աշակերտները կը վազէին գերաշ հրելով տիրանալու այդ շաքարներուն: Օր մը ուսուցիչներէն մէկը չոխոջաթի կտոր մը նետեց դիտմամբ Կարայի գտնուած տեղին վրայ. բայց սա բնաւ հոգը չորաւ, արհամարհանքով մը տեղէն իսկ չը շարժեցա՛ ոչ ալ գետինը ծռեցաւ առնելու. մինչգեռ անդիէն ընկերակիցներու երամը խուժեց իրարու ձեռքէ յափշտակելու այն կտորը:

Վերջապէս իր ուսումներն աւարտեց Արդէօյ և Իպրուքեանց մեջ պսակաւոր (Bachelier ès Lettres) ընդունուեցաւ ի Սօրպոն:

(Շարունակելի) Ս. ԲԻԻՐԱՏ

ԿՐ ԾԱՆՈՒՅՈՒԻ

Փիւնիկի արգոյ բաժանորդներուն որ աշունհետեւ, վճարումներու դիրութեան ու կանոնաւորութեան հաւար, հետեւելոյ՝ եւրոպական քերթերու օրհնակին, Գանձումները պիտի կատարուին քղրասարական վարչութեան ձեռքով:

Կր յուսանք թէ այս կարգադրութիւնը գոհ պիտի բողու երկու կողմնալ, ազատելով խմբագրութիւնը գործակալներէ, իսկ արգոյ բաժանորդներն ալ բաժնեգիրը Մանսարքոսոյ՝ դրկելու դժուարութենէն: —

ԼԱՀԷՅԻ ԱՏԵԱՆՆ ՈՒ ՍՈՒԼԹԱՆՆԸ

ՅՐԱՆԳՕ-ԹՈՒՐԲ միջադէպին առթիւ, Լահէյի Հաւաժոյնի ժրանասկան ներկայացուցիչը Տ. ՏԷՍԹՈՒՐՆԷՆԸ ՏԸ ԳՈՆՍԴԱՆ ԹԱՆԻ ԱՆՅ. 10ի թիւին մէջ հրատարակած է 8 ներկայ թրւակիր նախկ մը, որուն կարեւոր մասերը կը ֆաշենք թարգմանօրէն.

«Շատ արիներէ ՚ի վեր Սուլթանը, շնորհիւ Եւրոպայի անգորութեան, կրցաւ շուայել իր խոսումները, ծաղրել դաւնագիրները, բացէ ի բաց բռնաբարել բոլոր մարդկային օրէնքներ. օրէնքէ դուրս ելաւ: Գողութիւն, կաշառ, թալան, մարդասպանութիւն. անա իր կտաւարելու միջոցները:

Ամեն մարդ գիտէ ասիկայ, ամեն մարդ կը նանչնայ, ու դեռ իր ոնիրները կը տեսնէ: Իր յեճակէ՞ր մեր ամենուս տկարութիւնն է, վաստօթիւնը, անկու՛մը Եւրոպային, որ կը փորձէ ոչինչ լսել ու ոչինչ տեսնել, միեւնոյն հրդեհը կը

վառի իր աչիքն առջեւ, ի՛ր դուռը, եւ հարիր հազարներով զոհերը կը հեծծեն ի՛ր ականջներն ի վար:

Կտաւարութիւնները ֆաղափակաւորութիւն կարծեցին այսպէս կոյր ու խուլ ձեւանալ, բայց զոհերուն ողբուկոծը վերջապէս իրենց գլխէն ալ վերանցաւ ու ժողովուրդներուն սիրք գնաց մոտ գործեց: Չարքում մ'առաջ եկաւ այն ասէն, որուն առաջին նշանը տուած ըլլալու պատիւը՝ Տրանսական Խորհրդարանին ինկաւ անցած երկու տարբի:

Երբ արտաքին գործ. նախարարը հարկեցաւ մէջ տեղ դնել — իր ապերախս պարսկականութեան հաստնաս — երեք գործերուն — Կոստէ, Լորանսօ, Թուրքիան — վիճակը, անհամբեր արձակութիւն մը կը յայտնուէր ամեն կողմէ, ու երբ որ անի աւարտեց, բոլոր նստարաններէն, նշանակելու համար թէ ինչ կը պակսէր անոր նառին մէջ, մէ՛կ ձայն միայն լսուեցաւ այս բաներով. «Իսկ Հայաստանը...»: Յետոյ, երբ «Իբր Տօն Բիշօքներ պիտի աւերասանուին» դժբաղդ խօսքը թափեցաւ իր շրթունքէն, Խորհրդարանը բողոքեց: Երկա՛ր ասէն ֆնացած ժրանասկան խիղճը լսելի եղաւ ու եւրոպական խիղճը չը պիտի յամէ անգամ մ'ալ արձագանգը տալու անոր:

Սուլթանը կը դասապարտուի ուրեմն իր յանցապարտի դիրքը վերստանալու. կ'զգայ որ Եւրոպայի ձեռքը նորէն պիտի իյնայ իր վրայ, զինք կեցրնելու համար: Խաղաղատէրները պիտի պատեն առի՞թ մը բռնեն ներկայ ժամը, ֆաշակեւելու համար զանի անոր ապաւէն մը, փախսոց մ'ընծայելու, անոր համար բանալու սրբազան ապաստանը Լահէյի աստիճին:

Ո՛չ, բիրի՛ցս ո՛չ...: Չ'պիտի ընկերանամ, իմ մասիս, բանավարութեան այսպիսի զեղծումի մը, տրամաբանութեան այսպիսի պղծումի մը, մէ՛կ

բառով, այսպիսի կասակախաղի մը, արդարութեան ու խաղաղութեան կասակախաղի՝ մը, որ անիրաւութիւնն ու ջարդը ծածկելու՝ միայն պիտի ծառայէր... :

Զ'պիտի երթամ առաջին անգամով կեղծել, խաբարել բնոյթը՝ իրաւարար ասեմին եւ Ա.պս-Իւլ-Համի, դաս մ'ունի պատրուակելով, զանի զերծ պահել պատիժէն, որուն արժանի են իր ոնիրները, զանի դիպել որ վիճէ այս կամ այն պահանջը, մինչ ինք պարտի հաշի սալ իր թափած արիւնի՛ն :

Այն ասեմ իրաւարարութիւնը չարաւուր ֆող մը պիտի ըլլար լոկ, կեղծաւորութիւն մ'աւելի, մարդիկները խաբելու միջոց մը, փոխանակ անոնց ծառայելու. այն պիտի ըլլար ո՛չ թէ նարը սկարներուն՝ հօրներուն դէմ, զրկեալներուն՝ զրկողներուն դէմ, զոհներուն՝ դահիճներուն դէմ, այլ բռնաւորներուն, սիրապետներուն ու մարդասպաններուն նարը :

Սուլթանը՝ իրաւարարութեան դասավարութիւնն իրեն համար նոր բերդ մը պիտի ընէր, ուսկից պիտի կրնար շարունակել անպատիժ արհամարհել Եւրոպան :

Ո՛չ, Սուլթանին պէտք եղածը՝ կարգադրութիւնն է իր հաշիւներուն, ու բոլոր իր հաշիւներուն. Պէտք եղածը՝ կեցընելն է զանի իր նամբուն մէջ, ոչ միայն իր գողութեանց այլ եւ իր սպանութեանց, իր նողկալի եղեռնագործութեանց :


Այդ վեհապետը, զոր անգլիական Խորհրդարանին մէջ ու Քրանսական բեմին վրայ կրցան բարձրաձայն ուրակել *մարդասպան*, առանց երբէք նախագահին կամ նախարարին կողմէն բողոքի մը. այդ վեհապետը՝ հասարակաց թեմամի՛ն է փաղափարքեալ աշխարհին. Անի կրցեր է ցարդ օգտուիլ Եւրոպական անջատումներէն ու սեփնուութիւններէն, բայց հիմայ չափը լեց-

ուեցաւ, ու քանի որ առիթ մը, կամայ ակամայ, մեզ ստիպեց միջամտել. հիմայ որ Ֆրանսան իր ետեւէն կը ձգէ զղջացող ու իր խիստ երկարատեւ անգործութենէ շուարած Եւրոպան, հիմայ որ բոլոր սերութիւնները միաբանած — ինչպէս 23 տարի առաջ Պէրլինի մէջ — անգամ մ'ալ գուզընթաց կը փալեն շարունակելու համար իրենց հսկողութիւնն եւ ի հարկին՝ իրենց զսպողութիւնը :

Ու թող ապահով ըլլան խաղաղասէրները. այս միաբանութիւնը տեսնելով պիտի դողայ Սուլթանը, պիտի դադրի թափելէ անմեղ արիւնը. վախը պիտի հարկադրէ զինք խաղաղութեան, ինչպէս որ անպատիժ մնալը՝ խրախուսած էր զինք պատերազմի. ու Եւրոպան առջի վարկը գտած, փոխանակ անոր փախսոց մ'ընծայելու, պիտի դուրս հանէ զանի վնասելու դիրքէն :

Աստ՛նք եւն պատճառները, որոնց համար Սուլթանը չ'պիտի ընդունէր իրաւարարութեան ասեմին առջեւ. Կ'աւելցնեմ թէ՛ պարագաները բացառապէս նպաստուոր կը թուին ինծի, որպէս զի սերութիւնները, օգտուելով մեր նախաձեռնութենէն, ստանան անկէ գոհացումներն ու երաշխաւորութիւնները, զոր կը պահանջեն ո՛չ միայն քանի մը պահանջատարք, այլ եւ բովանդակ մարդկութիւնը :»

Տ՛ԷՍԹՈՒՐՆԷԼ ՏԸ ԳՈՆՍԴԱՆ



Լի-Հոնկ-ՉՍՆԿ, *Չինաստանի Պիզմարքը* կոչուած դիւանագէտը, որ վերջերս մեռաւ, ահագին հարսութիւն մը կը թողու իր ժառանգներուն, մօտաւորապէս 3 միլիառ Քրանգ. Լի-Հոնկ-Չանկ եղած է Շանկայի բամպակի առաջին մանարանն (1) ու ա-

(1) Աղեփասեղրիացիներու աջքը յոյս, մե՛նք ալ ունեցանք — ըստ Արեւելքի կամ

ուաչին մեկնական հիսուսը ստեղծողը. ի՛նք է նոյնպէս, որ, դեռ վերջերս, տէրըն էր Զինասանի միակ երկարուղիին. այն երկարուղիին որ 180 անգլ. մղոնի հեռաւորութիւն մ'ունի: Զինասանի երկարուղիներուն ամենէն անելի արգիւնաբերներէն մէկն է, որովնեսեւ անգլիական անձնակազմերը շահագործելու կը ծառայէ: — Վերջապէս Լի-Հունկ-Չանկ ունէր ընդարձակ որգոսներ (*riziere*) եւ իբրեւ գործնական մարդ, գանձոց մեակել կուսար իր հրամանին ճակ զսնուող զօրքերուն, այսպէս երբէք բանողչէք չը վճարելով: Յետոյ իր հունձներուն արգիւնքը կը

ունենալու վրայ եւնք — ըստ Կոչնակի — մեր հայ Լիւն, քաղաքս մեք առաջին մասնաւորին ստեղծողը:

Հոկտեմբերի Արեւելքն եր որ կը հրասարակեր այս մեծ շուրք, միեւնոյն ժամանակ ուրախութիւնն ալ չը մոռնալով յայտնէր Քեյիզեանի մասնաւորին առքիւ. իսկ Եոյ. Զի Կոչնակը հետեւեալ տղերը նուիրած է:

«Կը լսենք քե Կարապետ Պեյ Քեյիզեան մտադիր է մանարան մը հաստատել Աղեքանդիոյ մեք ապրուստի միջոց մը հայրապետու համար հոն խոնուած անգործ Հայերուն:»

Ո՛ր եւնք. հրաշքի դարերը վաղո՛ւջ անցած են. Փարաւոնի երկրին մեք մի՛ փնտոնք այդ հազուագիտ ապրանքին որ բարեգործութիւն կը կոչուի կամ ազգի սեր:

Ահա՛ ուրեւն ԵՒԼի՛ տեսակն առասպել մըն ալ այս մանարանի առասպելը, որ քերեկ քերակ առանկոյնքաւոր Աղեքանդիոյ մեք թոյնեղե կեք, Միջերկրականէն կ'անցնի Վոսիոն, կ'ողջունէ Արեւելքը, այնուհետեւ Աղլանեանն ալ կը կտրէ ու, Եոր Աշխարհի պակտուխս Հայերուն աւեսարէր աղաւնի, թունդ կը հանէ արտերը բոլոր հայ գործաւորներուն, որոնք կ'աշխատին ընդհանրապէս անտրիկեան մանարաններու մեք:

Չ'եւնք հասկնար սակայն քե ի՛նչ հանոյք կ'զգան շիւնեղե, քե ի՛նչ շան կ'սպասեն հրապարակ նետեղե ասանկ խոշոր սուտ մը:

Կ'աղաչե՛նք, Աստուծոյ սիրո՛յն ըլլայ, արգո՛յ պաշտօնակիցներ, ԱՐԵՒԵԼԻՔ ու ԿՈՉՆԱԿ, մանարանի մը — ուր անգործ Հայեր պիտի գործեն եղեր ու իրենց ապրուստը հայրապետէն — ստեղծողի անարգանքը մի՛ ընէք Տիւր Կարապետ Քեյիզեանի պէս Պեյի

ծախուէր Պետութեան ցամաքի ու ծովի բանակներուն համար, որոնց Լի էր սովորական հայրապետիչը. աստի կրկնականի Եան: Դիւրին է հասկնալ թէ Լի-Հունկ-Չանկ ի՛նչու այսչափ շուտով միլիտարաւէր է եղած.

Հ Ա Ր Ց Ը

— 0 —

Վերադարձներու եղանակն է. մեկնողները կը դառնան կարգաւ, իրենց հետքերելով արեւմուտքի երջանիկներուն երկսեռ երամբ, որ կուգայ ձմերել մեր եղկ ու մեղկ կլիմային ճակ, մինչ անդին, ձիւնի մէջ թաղուած, արիւնով ու մոխիրով շաղուած ամառութիւններուն մէջէն վտիտ ու կմախ ուրուականները կը սահին կ'անցնին մարդկային էութիւններու, որոնք հակաազգայնացուցէն դասապարտուած են կրելու ան պատիւ բռնապետութեան մը լուծն ու ընկ՝ վզեցնող պայմաններու կուտ շղթան:

Տարուէ տարի կրկնուած հեգնութիւնն է ասի, որ կրկնայ մեք անկիլ շատ հեռուները, ինչ որ շեղում մը պիտի ըլլար մեր առաջագրած նպատակէն: Դառնանք ուրեւն մեր նիւթին:

Չը մոռնանք թէ՛ վերադարձողներուն մէջն է այնքան մաշուցներով սպասուած մեր Ասեմապետը, որ Եաբաբէ մ'ի վեր Գահիրէ կը գտնուի եւ

մը, որ Տեղիս Խառն Դասարանին վերաբնեւից Ասեմի անգամ, դատարար միայն խեղ կը հասցընէ եւ որուն քով եքի բարի կամք ալ չը պակսի, դարձեալ չ'կրնար ստեղծել այդ արեւեալ մանարանը: Կարապետ Պեյ, անգործ հայ գաղթականներուն ապրուստի միջոցներ խորհելէ հետոյ, մեկ հոգ միայն ունի. ձեռքէ չը հանէր Փոխ-Ասեմապետի գահը, Տեղիս Առժամեայ Թաղական Խորհրդին մէք, որուն սակաւին շարունակութիւնը՝ սա՛նն արհամարհանք մ'է ժողովորդի իրաւունքին ու բռնաբարում մը՝ մեր Ազգ. Օրենքին...:

Թո՛ղ այս տղերը կարգան հեռաբնակ հայրենակիցներն ու չ'եղեն ճամբորդեն միւնչեւ եզրագոս, Մանարանին հակաբարեւ սուաջնորդուած:

կ'իմանանք թէ մօտեւ հոս պիտի իջնէ, Աղեփանդրիա, ուր մէկէ աւելի կըն-
նիոներ կ'սպասեն իրենց լուծումը :
Ու անոնց լուծումին եղանակն է որ
պիտի արդարացրնէ կամ ոչ, տեղիս
հասարակութեան բնագոյային յոյսեր,
գոր կը տածէ իր սիրած ու յարգած
Անճնաւորութեան վրայ, որպիսին է
Վսեմ Պօղոս Բաշա Նուպար :

Խոսելի քարնդոսն է չէ՛ն սակայն որ
պիտի թուին իսկզբան խափանել Նորին
Վսեմութեան քայլերը, եւ որոնք գրեցէ
զինք մոտէն ի վերջոյ վնասական որոշ-
ութեանց բաղձալի փորձութեանը,
ըսել կէզեմն արմատական յեղաշրջու-
մին որ անհրաժեշտ դարձած է միան-
գամ ընդ միտ լուծելու համար կըն-
նիոները, որ կային արդէն ու հլմայ
ա՛լ աւելի բարդուած են իր բացակա-
յութեանը, բացառիկ պարագաներու
մէջ ի՛ր կազմած Առժամեայ Թաղ
Խորհուրդին անխորհուրդ քաղաքակա-
նութեան — ճիշդ բառը չ'ըսելու հա-
մար — հետեւանով :

Ո՛չ ինչ աւելի դառնապէս նեմա-
րիտ է քան այսօրուան տեղական ազ-
գային անիշխանութիւնը. վերջ մը կայ
մէն մի արտի վրայ, որ քիչ թէ շատ
գիտէ թրթուալ ազգային անճնասիրու-
թեան ազնիւ զգացումով մը. այդ վեր-
ջը բացուած է 1899 Դեկտեմբերի պատ-
մական գիշերածողովէն ՚ի վեր, երթա-
լով լայնցած ու խորունկցած, ու վեր-
ջեւ, փսախսի փոխուելու մօտեցած,
յախուռն հարուածներէն ու պատժու-
ական նախասիւններէն ՚ի վեր որոնք
շեշտակի իջան ու տեղացին ամեն պար-
կեց գլուխներու վրայ, ազգին խոր-
բացած մէկ զանկին ապերախտ ձե՛ն-
ով ու թունաւոր լեզուովը : Հասարա-
կութիւնն զգաց այն աստն թէ ո՛ր ձեռ-
ներու մէջ դուած էր իր բաղդը. զգաց
չարիքն ու ցնցուեցաւ, ու այդ ցնցումն
է որ ամիսներէ ՚ի վեր կը սարսէ
հասարակութեան պարտանանաչ ու գի-
տակից անդամները :

Մամուլը, այսպիսի պայտ միջա-
վայրի մ'ընծայած նպաստաւոր հողին
վրայ, բնական էր թէ զինուէր գործուած
անհրաւորեանց դէմ, ներքնչէր հան-
րութեան ինչ որ օգտակար էր ու փր-
կաւէտ : Ու Մամուլը կատարեց իր դե-
րը. արհամարհանքի կոչին նշանը սր-
ուած էր. լուել՝ վաստօթիւն էր, ընկը-
կել՝ ոճիր. ուստի մոտեց պայքարը, ու
մոտեց անկեղծօրէն ու վստահօրէն. մեր-
կացուց ամօթը, դատաստիտեց սուտը,
ձաղկեց ու ձաղկեց, առանց խտր դնելու
կարգերուն միջեւ. հարուածն ուղղեց
կէտին, ուսկից կուգար նախասիւնը : ու
կրնա՛ր այլապէս վարուիլ, երբ հրա-
պարակային ստախօսութիւնը, անպատ-
կառ իմաստակո՛թիւնը, շնական սու-
տերը, իրեն նեմարտօթիւն մարտել սալ
փորձուեցաւ միամիտ ժողովուրդին, որ
իր ինքնագիտակցութեան պակասին ա-
մենասխուր ապացոյցը տուաւ, գիտու-
թեամբ թէ անգիտութեամբ, կամայ թէ
ակամայ, խոստումի թէ նեղումի սակ,
ստորագրելով ամիսներով փողոցէ վո-
ղոց կրպակէ կրպակ՝ պստցուած հա-
կահանրագիր մը, որ ուրացումն էր
ազգ. արժանապատուութեան ու հայ-
հոյութիւն մը՝ Սահմանադրութեան երեսն
ի վեր :

Ասի եղաւ ընդ հովանեաւ խաղաղատե
Սրբ. Առաջնորդին ու յայտնի գործակցու-
թեամբ Առժամեայ Թաղ. Խորհուրդին... Իսկ
մամուլը, որ հանրային զգացումները կը բարդ-
մանէր, որ կեղծիք դիմակագրած կ'ընէր, որ
ազգային օրենքին բռնաբարոււմը կը հրապա-
րակէր, կը յիշէ՛ր, ազնիւ ընթերցողներ, ինչ-
պէ՛ս վարձատրուեցաւ. Ս. Խաչի կիրակին,
եկեղեցւոյ բեմէն Սրբ. Առաջնորդին Խաչի
ճառովը դատապարտուեցաւ, «Արհամարհե-
ցի՛ք, մի՛ կարդաք յրագիրը», չարաճուկ բա-
նադրանով մը :

Եւ որովհետեւ այդ բանադրանքը — միջ-
նադարեան գիւտ — մեռած տառ մնաց. ու
հասարակութիւնն ա՛լ աւելի հետեւեցաւ մա-
մուլին ուղղութեանը, անխուսափելի հարկ
մը ներկայացաւ. հալածել, խաբանել մա-
մուլը, խեղդել ձայնը, մարել լոյսը. բայց

ի՞նչպէս երանելի՛ գրանցուքիւն, ո՛ր ես...

Մնացեալը Ես՛ս մութ է ու ներքին... մօտ ապագան պիտի պարզէ ու լուսաւորէ: Դասաւոր մը կրնայ ըլլալ դաստիարակ, բայց երբ արդարութիւնն ու նեմարտութիւնն ունիս քեզի կուսակից, մի՛ վարանիր, պիտի յաղթես. աղէ՛, քաղէ՛, մի՛ ըստ առաջ, մի՛ ըստ դէպ ՚ի լոյս, ու լոյս, աւելի՛ լոյս...: Կեօքեյի՛ լոյսէն:

Եւ ի՞նչ կայ աւելի քաղցրագոյն քան հալածանք՝ նեմարտութեան համար, ու զըրկանքը արդարութեան համար: Երբ կիրքերը կը մահին, երբ փրփուրները կ'սպառին, երբ ամպերը կը ցուին, ա՛յն ատեն է որ աւելի շինջ, աւելի՛ ուժգին, ու աւելի՛ պակասութիւն կը ներկայանայ նեմարտութիւնը, որուն նախանշոյլները ծայր տալ սկսած են արդէն:

Այս առթիւ շահեկանութեան գուրկ չ'ենք զսներ «Փիւնիկ»ի ընթերցողներու ուշադրութեան յանձնարարել Պատ. «Փարոս»ի Թ. 20ի Ազգային բաժնին գլուխը զեօքուած հետեւեալ տղերը — քէ եւ նորութիւններ չը բերին, դուրս ըլլալով որ «Փիւնիկ»ի մէջ մէկէ աւելի անգամներ կրկնուած ապացուցուած նեմարտութեան մ'արձագանգն են անոնք —:

— «Արժանահաս աղբիւրներէ քաղած տեղեկութիւններու համեմատ, Ն. Վ. Պողոս փառանքաբեկամական շրջանակի մը մէջ խօսելով յայտարարած է թէ նախկին Թաղական Խորհուրդը ամբողջովին հրաժարած ըլլալով, ինքը՝ իր անձնական պատասխանատուութեան տակ, առժամեայ հանգամանքով Թաղականութեան կանչած է այն անձերը որ այս օր այդ Խորհուրդը կը կազմեն, հետեւաբար զարմանք յայտնած է թէ զսնուած են այնպիսիներ որ սահմանադրական անունը տուած են այդ օրինակ կազմութեան մը:

Փառանք մոյնպէս յայտարարած է թէ՛ քիչ օրէն նոր ընտրութիւններ պիտի կատարուին. այս անգամ նեմարտապէս սահմանադրական Խորհուրդ մը ունենալու համար»:

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

— ԹՈՒՐԲԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ. — Ներկայ 16 թուով ԹԱՆԻՆ մէջ կը կարդանք.

Տեարք Տ'էսքուրնէլ, Գոռէն եւ Սմայա երէկ Տ. Տէլգասէի դիմում ըրին, Տ. Տէլգասէն կարելի եղածին չափ շուտով տեղեկութիւններ ձեռք բերելու նպատակով, տեղեկութիւններ որ կը շուտապէս մեր ու Սուլթանին միջեւ գոյացած կարգադրութեան պայմանները:

Տ. Տ. Տ'էսքուրնէլ, Գոռէն ու Սմայա այն հաւատարման դիմումով յայտնեցին թէ՛ հակառակ զիրենք անջատող կարծիքի խորունկ տարբերութիւններուն, լիովին միաբան էին իրենք, ինչպէս եւ Խորհրդարանին իրենց ընկերները, հետեւեալ խնդրին վրայ որ Քրանսական կառավարութեան ու բոլոր քաղաքակրթեալ կառավարութեանց լրջօրէն խորհիլ կուտան:

Ա՛յ չը թողուլ Սուլթանին այսուհետեւ անպատիժ լրքութեան, որուն չափն անցուցած է արդէն Պէրլինի դառնագրէն ՚ի վեր, ու հարկադրել զինք, միահամուռ համաձայնութեամբ մը, յարգելու իր յանձնառութիւններն ոչ միայն պահանջատարց, այլ եւ հանդէպ Եւրոպային ու մարդկութեան:

— ՖՐԱՆԳՕ - ԹՈՒՐԲ ՎԷՃԸ. — Կոմս Տ'Օնէյ մտադիր էր արտաքին գործերու նախարարը հարցապնդելու Ֆրանսո-Թուրք վէճին կարգադրութեան վրայ: Բայց իմացած ըլլալով թէ Տ. Տէլգասէ խնդրած էր միեւնոյն միջադէպին առթիւ զինք հարցապնդել ուզող Տէ'սքուրնէլէ, Տրնիս Գոռէնէ ու Սմայալէ պայտարը վերածել արտաքին գործերու պատշոնական պիւսնէին վիճարանութեանը, Տ. Տ'Օնէյ իր հարցումն ալ որոշեց օրաձգել ետքի թուականի մը:

— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ. —

Ս. Բերսպուրիէ լուր կը հաղորդուի Կազէք սը Գօջօյնէր պաւսօնաթերթին.

«Չրոյց կայ թէ Ռուսիան ու Ճրանսան իրենց միջեւ որոշած են եղեր միասնական գործողութեան մը հիմնական պայմանները՝ Պերլինի դաշնագրին մէջ Հայաստանին ու եւրոպական նահանգներուն վերաբերող ու Սուրբանէն ապահովուած բարեկերպութեան գործադրելու համար: Կ'ըսուի նոյնպէս թէ՛ մօտերս կը խորհուի վեհաժողով մը գումարել Պերլինի դաշնագիրը ո՛չ թէ վերաքննելու, այլ գործադրելու նպատակով: Ռուսիոյ վարիչ շրջանակներուն մէջ յոյս կայ թէ՛ ստորագրող տերութիւնները պիտի վեհաժողովին մասնակցին: Բայց այդպիսի վեհաժողով մը 1902 զարուակէն առաջ հազիւ կրնայ գումարուիլ:»

Այս լուրը մօտեցնենք Արսաբի գործերու Նախարար Տ. Տէլգասէի յայտարարութեանց՝ Խորհրդարանին մէջ:

— ԱՒՍՏՐՕ - ԹՈՒՐԿ ՎԷՃԸ. — Աւստրիան Բ. Դրան տասնըջորս պահանջումներ ուղղած էր, սպառնալով ետ կանչել իր դեսպանը, եթէ իրեն գոհացում չը տուէր: Արդ, Նոյ. 13ին Հավաս կ'իմացնէ թէ՛ Դուռը տուաբոլոր ինչ որ կ'ուզէր Աւստրիան:

Այս բոլոր պահանջումները, տուգանք ու վնասումներ, կը կազմէին 63 միլիոն ճրանքի պահպանելի գումարը, որուն միայն 2 միլիոնը կուզէր վնասել Դուռը: Սակայն, ինչպէս կ'երեւի Հավասի հեռագրէն, Աւստրիան այսօր լիովի ու ամբողջական գոհացում ստացած է:

Ահաւասիկ ճրանսական նախարարին գործած հրաւերներէն մէկը...:

— Ճրանգօ-Թուրք միջադէպը քննադատուեցաւ Ֆրանսական և ուրիշ կարևոր թերթերու կողմէն, որոնք ընդհանրապէս չ'են ուզեր ըմբռնել կարեւորութիւնը Ճրանսայի դերին: Այս առթիւ Տէլլի Նիլիզ հետեւեալ սողերը գրած է. «Բարդակիրք եւրոպային երախտագիտութեան արժանի եղաւ

Ճրանսան, կարգի բերելով բացարձակ բռնաբարիչը բոլոր դաշնագիրներուն ու բոլոր մարդկային օրէնքներուն»:

Անմահ Մխիթարայ երկդարեան Յօբէլի կարգադիր յանձնաժողովին կողմէն ստացան հետեւեալը, զոր հանոյժով կը փութանք հրատարակել:

ՇՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՌ

ԲԱՐԵՄԱՔԹՈՂԱ ԵՐԿՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԻՆԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՈՒՆՏԻՍ

Թեպէտ անագան (1), սակայն չի բարադուն սիրով եւ զգացմանը կուգամք յայտնել մեր անկեղծ շնորհակալեաց հաւաստիք՝ բարեկամաց բարեսիրաց, մանաւանդ հայրենասէր, երախտասէր եւ խրախուսիչ Ազգայնոց. որոց իղձն ու բաղձակն հաւաստելով մեր անհուն փափաքին եւ եռանդեան՝ առ երանաշնորհ Հայրն մեր ՄԻԹԱՐ, անխտր եւ աննախանձ ոգւով հրշակեցին եւ փառաւորեցին զնա եւ անոր հաստատ Միաբանութեան՝ առ ազգն մասնացած գրական եւ կրթական երկդարեան գործակալները:

Այդ հանդէսն՝ որ ըստ կարի այնքան շեղուրեալք կ'ստանայ յ'8, 9 եւ 10 Սեպտեմբերի, Ս. Ղազարու կղզեկին մէջ ի վեկեթիկ, առաւել եւս փայլ մ'տաւ ներկայութեան, թէ Սրբագան Նուիրակաց եկեղեցական Գերագոյն Պետաց Կարողիկոսաց ազգիս հայոց, եւ թէ միանգամայն փառաժողով հասարակութեանց եւ գաղղակաց ներկայացուցիչներով. որոնք ի դիմաց մեծամասնութեան Ազգիս փութացած էին յայտնել իրենց եւ համօրէն ժողովրդեան համակրանքն եւ սերն: — Ո՛ր բողոքով

(1). Անուես ներողամիտ պիտի զնուիք մեր ազնիւ ազգային, սոյն տղերս անագանեւուն համար. վասնզի հանդիսական աւուրց անմիջապէս յաջորդեցին հանգստեան եւ գիւղագնացութեան օրերն, որով եւ Յանձնաժողովոյ անդամք ցուեցան մինչեւ այս վերջին նիստը:

այն ամեն քարեկոտնական հեռագրերն, նամակներն, օրհնութիւններն, ուղերձներն եւ նուէրներն, որոնք հեռաւոր եւ մերձաւոր, ծանօթ եւ անծանօթ անկիւններէ տեղացիս այդ հանդիսաւոր աւուրց մեջ ի Ս. Ղազար, ի կողմանէ արեւելասէր Սրբազան Քահանայապետին Լեւոն ՃԳի, եւ Իսաչիոյ վեհագն Մայր Թագուհւոյ Մարգարիտայի, եւ ուրիշ պէտական անձանց, սրբազան եպիսկոպոսաց եւ առաջնորդաց, ազգային եւ օտարազգի յրագրական, գիտական, կրթական, բարեգործական եւ գրական հաստատութեանց, տարց եւ տիկնայց, գաղղրականաց եւ ամեն բարեկամաց:


Արդ, որովհետեւ անելի քան 500 եղան այդպիսիք, եւ մեզ անկարելի՛ առ իւրաքանչիւրն առանձինն գրով պատասխանել՝ արժանաւոր շնորհակալութեամբ, ուստի ասիպիմք փոքրիկ գրութեամբս յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը, համակրանքն եւ պատրաստութիւնը, փոխարէն՝ այնքան անելի քան զանկալութիւն մեր ցոյց տրուած մեծերական եւ ազնուական բացատրութեանց՝ գրով, հեռագրով եւ որպիսի եւ է նուէրով եւ նուիրակով, զորս ի յուռն հասարակաց ըղձից կը փութամք հրատարակել (2) առանձին հաստատով որպէսզի այդ երկուսեք բարեսիրական յայտարարութիւնքն անմոռաց մնան յայագային:

Ուրեմն ընդունեցի՛ք, ո՛վ ազնիւ Ազգայինք մեր, զայս իբրեւ գրառական մեր երախտագէտ ճանաչման՝ քան զոր անելի հօր եւ հաճոյ համարիմք եւ մաղթեմք մեր երջանիկ Հօր Մխիթարայ բարեխօսութիւնը եւ օրհնութիւնը:

(2). Այս նոր հրատարակութեան խորագիրն է՝ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՅՈՒՅԵԼԻՆԻ Ի ՎԵՆԵՏԻԿ: — Հարկ կը համարիմք ծանուցանել մեր յարգոյ ընթերցողաց, որ սոյն հրատարակութեան գոյացած եկամուտը պիտի յատկացուի Մխիթար Աբբաօր յիշատակին կանգնուելիք արձանին, որուն հիմնարկութիւնը տեղի ունեցաւ Սեպտ. 9ին:

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՅՈՒՅԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ



Ամերիկայի մեր Պատ. Պաշտօնակից «Հայրենիք» ի վերջին քիչ քաւերով հասած քիւնն կ'արտագրենք հետեւեալը, որ շահեկանութեանը հետ ունի նաեւ այժմեութիւն:

21 հոկտ 1898

«...Ձեր վայելած մեծ համբարը, որուն իրաւամբ այսօր արժանի էք, մեծ հաւատք ներշնչեց ժողովին իբր բարգման ավբող կուսակցութեան, որ պիտի կարենաք Հայ ազգին այս ծանր նգնաժամին նշանաւոր ծառայութիւններ մատուցանել ազգային փրկութեան Դասին, իբր ղեկավարիչ մը հնչակեան կուսակցութեան...»

Ղեւոնդ... Կ. Փ. Փափազեան

«...Շատերը գիտեն քէ մէկդի դնելով ձեր հին գործնէութիւնը ու միայն վերջի տարիներուն մէջ դուք անձնական ի՛նչ մեծ գոհողութիւններու յանձնառու եղաք Ազգին մատուցական առաջնորդ մը հանդիսանալու համար: Ձեր դրամը, ձեր բարեկեցութիւնը, ձեր հանգիստը գոնեցիք ընդհանուրին համար...»

Ղեւոն Մկրտիչեան

1 օգոստ 4 դեկ 99

«...Կ'ընդունի՞ս մեր կուսակցութեան մէջ Աստուածայեցի, այսինքն *chef*-ի պատշօնը ստանձնել, թերթերու խմբագրութեամբ: Այս պարագային ես բոլորովին կը փառուիմ...»

Ա. Արփիարեան

Աղեփաւանդրիա, 25 դեկ 99

«...Եթէ պ. Արփիար յաջողի Ձեզ համագել որ ասանկ պատշօն մը ստանձնէք, մենք ամենքս ալ շատ ուրախ կ'ըլլանք ու պ. Արփիար ալ կուսակցութեան երախտագիտութեան կ'արժանանայ...»

Ղեւոն Մկրտիչեան

Ահաւասիկ յեղափոխական քրնա-
րի մը է՛ն անոյ՛ ձայները: Ո՛ր եւ է
մարդու մը դժուար պիտի ըլլար երե-
ւակայել հրաւէր մը, առաջարկ մը, որ
ասկէ աւելի պատուաբեր եւ հրապու-
րիչ ըլլար:

Ես մերժեցի: Բայց ամէն ոք կար-
ողով այս նամակները պիտի արդա-
րացնէ զիս այն համարձակութեան հա-
մար գոր ունեցայ միջնորդ մը ներկա-
յանալու Հնչակեաններուն, ինքնաբե-
րաբար, միութեան համար:

Եթէ երկիւղ մ'ունէի, այն ալ դաւ-
նակցականներէն էր: Ասոնք պիտի ըլ-
լան, կ'ըսէի ինքնիրենս, այն անդդ-
ւելի ժայռը, քարի նման խօսք չհասկը-
ցող այն կուսակցութիւնը, որուն վրայ
չպիտի կրնամ ազդել ոչ մի կերպով:
Ինձ չպիտի վստահին, որովհետեւ յար-
գանք մը չունին իմ անձիս:

Բարեկամ մը, որուն հաղորդեցի
այս երկիւղներս, յանձնառու եղաւ
թոչիլ երթալ ժընէվ, դաւնակցական-
ներուն տրամագրութիւնը հասկնալու
համար, եւ ինձ անկէ գրեց.

Ժընէվ, 9 յունւար 1900

«...Տեսնեցայ... հետ: Միացումի
գործին կարեւորութիւնը, բարձրութիւնը
ու անհամեմատ օգտակարութիւնը իրենք
միշտ կը խոսովանին, ու թէպէտեւ այս
պահուստ շատ լարած կը տեսնեն երկու
կողմի յարաբերութիւնները, այսու-
հանդերձ, կը հաւանին ձեզի հետ բա-
նակցիլ:

«Ինձ հարցուցին թէ կարելի՞ է ձեզ
հոս հրաւիրել: Նկատելով որ վիրաւո-
րիչ բան մը չկայ ձեզի համար հոս
գալով, եւ միւս կողմէ, իրենք հասկը-
ցան որ միութեան նորոգ գաղափարը
ձեզմէ եւ ինձմէ կը ներկայանայ իրենց
եւ ոչ թէ հնչակեաններէն, հետեւաբար,
ամէն պարագայի մէջ, ապագայի տե-
սակէտէ ալ վնաս մը չկայ, ձեր հոս
գալովը այս կամ այն կուսակցու-

թեան, ես խոսացայ ձեր կողմէն...»

Դաւնակցականներուն դէմ կաս-
կածոտութիւնս սկսաւ քիչ մը նազիլ
այս նամակին վրայ:

Այդ միջոցին Իսալիա էի, եւ պն.
Արփիարէն խնդրած էի որ Լօնսօնէն ել-
լելով ինձի գայ: Միտքս էր նախ իմին
հնչակեաններու հետ կարծիքներու փո-
խանակութիւն մ'ունենալ: Պն. Արփիար
չեկաւ եւ ինձ գրեց:

«...Կացութիւնս այս ըլլալով,
կ'զգաս թէ որքան կը ցախմ տեղս ան-
շարժ մնալու հարկադրուած ըլլալուս»:

Ա. Արփիարեան

Այս հանգամանքներուն մէջ, ինձ
կը մնար թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին ոտք
երթալ, — ինչ որ ըրի նախ ժընէվ եւ
յէտոյ Բարիզ ու Լօնսօն մեկնելով, ուր
օրեր ու շաբաթներ անցուցի միութեան
հարցին վրայ վիճարանելով:

Մեծ մտահոգութիւնս եղած էր թէ
ի՞նչ լեզու պէտք էր որ գործածէի իւ-
րաբանչիւրին հետ: Հա՞րկ էր, զիրենք
գրաւելու եւ սիրաւահելու համար,
դուրս ել եւ ներքողել, ըստ Արեւելեան
դուրսեան: Հա՞րկ էր, ընդհակառակը,
չվարագորել իրենցմէ եւ ոչ մէկ պակա-
սութիւննին: Մէկ խօսով: պէտք է՞ր
որ աչք գոցէի իւրաբանչիւրին իսկա-
կան վիճակին վրայ: Այդպէս վարե-
լով, պիտի ստած ըլլայի, եւ սուրբ հիմ
ընելով միութեան պիտի շինէի խա-
խոտ շէնք մը, աւագի վրայ: Այս խոր-
հրդաւորութեամբ, որոշեցի խօսիլ ամէն
մէկին ոչ թէ իր անսգիտ, այլ քննա-
դասելի կողմերուն վրայ, խորեւելով
միւս կուսակցութիւնը իր առջին պրզ-
տիկցնելէ: Էականը վերջապէս մէկ
բան էր, այն էր որ իւրաբանչիւրը ան-
կեղծօրէն անդրադառնար իր թերու-
թեանց վրայ:

Քննադատը չի սիրիր, այս է յայտ-
նի, եւ բարեկամս որ գիտէր նպատակս,
ինձ կը գրէ:

«...Ժընէվէն եկան... հետ երկար

սեսնեցայ: Ստիպուեցայ ձեր ընթացքը
բացատրել, քիւրիմացութիւնները ջնջե-
լու համար. թէ որքան խիստ գտնուած
էք իրենց նկատմամբ, նոյնքան եւ աւելի
հնչակեաններու հանդէպ...» Բ.

Կարեւորագոյն խնդիր մըն ալ այն
էր թէ ո՞ր տեսակէտէ նայելով պէ՛տք էր
որ միութեան պայմանները գծէի: Արդ-
եօ՞ք կուսակցութիւնները հաւատարմութեամբ
տեսակէտէն միայն: Որովհետեւ երկուքը
կրնային հաւատարմութիւնը արդիւնք
հար գիրար նոյն իսկ տեսարաններ, եւ
կամ առանց քայլ մը ընել տալու Յե-
ղափոխութեան, որ, ալ այսուհետեւ,
ըլլալու է Ազգային Հաստատութիւն
մը, միակը որ պիտի կրնայ Ազգը ար-
գիլել ինքզինքը ուրանալէ, ինքզինքը
մոռնալէ:

Այս հարցերուն մտադիր ըլլալով է
որ նշանակեցի այն ինքը պայմաններն
որոնք հիմա ծանօթ են ամէնուն:

Ո՞ր լուրջ հայը կրնար մտէն ան-
ցրնել որ «Արփիարի խնդիր» ըսուած վէճը
նամբուս վրայ խոչընդոտ մը պիտի
հանուէր հնչակեաններուն կողմէ: Խեղճ
մը հորը քայլ մը նետեց, կ'ըսէր Նաւա-
րէի Հօնան, քառասուն իմաստուն շուրջը
բոլորելով չկրցան հանել: Ճիշդ այս
էր: Դաւանակեաններուն գնդակովն
իսկ վերջիվերջոյ պատահաստուած բըր-
քահայ մը կը շինէ կեղծ թղթեր, ու
կ'ամբաստանէ պն. Արփիարը իբրեւ
մասնիչ, կը յաջողի խաբել աս ու ան,
կ'ստեղծէ անոր դէմ տեսակ մը հանրա-
յին կարծիք — սխալ -- որով կը պա-
շարիսն շատ մը ուղղամիտ եւ ազնիւ
Թրքահայեր եւ Ռուսահայեր, միեզ ինչ-
պէս Տրէյֆիւսի պարագային մէջ խաբ-
ւեցան շատ պատահաւոր ճիշտացիներ,
եւ կ'ունենանք այսպէս խնդիր մը որ
ուրականի պէս առջեւ եկաւ սնկե-
ցաւ, ամէն մէկ քայլիս:

Ինչ թող ներքի հոս առաջ բերել
ժընկէվցիներուն հետ ըրած բանակցու-

թեանց օրագրէն սա մասը:

«...Պ. յայտարարեց որ պիտի շար-
ունակեն Յանուարին մընացող մասը
հրատարակել, առանց ընդհատելու, ա-
ռանց յետաձգելու: Եւ զինադուլ ա-
ռաջարկեցի, մեծուցաւ: Դիտել տի թէ
սխալ մըն է որ կը գործեն, յարձա-
կումները շարունակելով նոյն այն բա-
յալին որ եւ հաւատարմութեամբ կ'աշխատ-
են: Զիջում չըրին:

Նիստէն մեկնեցայ, այն կարծիքով
որ այլեւս կարելի չէ բանակցիլ: Բայց
հետեւեալ օրը, ըրի սա յայտարարու-
թիւնս: Եւ ձեզ թող կուտամ շարունա-
կել ձեր յարձակումները Յանուարին,
բայց միայն այն պայմանով որ պն.
Արփիարին իրատուն նախնայ իր խըն-
դիրը հանելու Միացեալին ամօրեայ
դատարանին առջեւ, որուն կազմիւր
իբր պայման կ'առաջարկեմ անս: Պա-
տահանեցի թէ արդէն դատարան
եղած լմնցած է այդ հարցի վրայ
Պօլսոյ կօմիտէի կողմէ...»

Այսպէս բաղխեցայ զօրանք ընդ-
դիմութեան մը: Զգացումս սակայն
այն էր որ ընդդիմութիւնը չ'պիտի վա-
ւերացէր անխաբար, ոչ բոլոր դաւ-
անակցականներէն, ոչ ալ հանրային
կարծիքէն: Հարկ էր որ ասոնք գործին
միջամտէին իրենց աննախապաշարեալ
ուղղամտութեամբ: Այս միջամտութիւնն
առթելու համար, խմբագրեցի եւ հրա-
տարակեցի այն նամակը որ ստորա-
գրուած էր իսկէնսէր եւ Յակօբեան:
Այս մասին ստացայ հետեւեալ գիրը:

Ժընկէվ, 3 ապրիլ 900

«...Քաջ տեղեակ լինելով մեր
տրամադրութեան, դուք չպէ՛տք է այժ-
մեանից բարձրացնէք դատին հարցը...
Մենք անկարող ենք մեր ընկերների ա-
ռաջ պաշտպանել մի բան, որին հա-
կառակ էինք ինքներս, եւ միւս կող-
մից դուք հրապարակաւ մեզ դէմ առ
դէմ էք կանգնեցնել կողմնակի անձ-
նատրութիւններ եւ դուք միտք մտքին

մէջն է՛ կամենում մնալ: Այսու ամե-
նայնի կը սպագրենք պրն. Իսկէնէրի
Եւ Յակոբեանի նամակը:»

Արեւմտեան Բիւրօ »

Ժընէվ ուրեմն դժգոհ էր: Բայց
գործադրած միջոցս, այսինքն հանրա-
յին կարծիքին միջամտութիւնը ներգոր-
ծեց դաւենակցականներու մեծագոյն մա-
սին վրայ: Եւ, շիտակը, աւելին չէի
կրնար սպասել կուսակցութենէ մը որ
մինչեւ ցայն վայր այնքան հակառակ
էր դասի կէտին վրայ զիջում ընելու:
Ահաւասիկ այս շատ գովելի եւ պատ-
ւաբէր զիջողութիւնը ծանուցանող նա-
մակը.

Ժընէվ, 31 յուլիս 900

« . . . Դաւենակցութեան կամքը
արտայայտող մարմինի որոշումը Պատ-
ւոյ ասեանին մասին ամփոփում է հե-
տեւեալ կերպով. մերժել արդէն տրած
միութեան հարցից դուրս անհասական
խնդիրներով զբաղելու առաջարկը, ի
նկատի ունենալով որ միութեան պայ-
մաններում պատշաճ տեղ է տրած եր-
կու կողմի ամբաստանեալների համար
հիմնւելիք դասարանին. . . »

Արեւմտեան Բիւրօ

Արդիւնքն ակնհայտ էր այլեւս.
Դաւենակցութիւնը կը մերժէր եւ իրա-
ւամբ, անհասով մը զբաղելու, բայց
կ'ընդունէր որ միութեան պայմաններէն
մին ըլլար դասարանի մը կազմութիւ-
նը, որուն ենթարկուէր պրն. Արփիարին
խնդիրը, ինչպէս ուրիշ ամբաստան-
եալներ, եթէ կային: Ճիշդ առաջար-
կածս էր:

Բոլոր այս ժամանակին ուր դաւ-
ենակցականները կ'իրագործէին զգալի
բարեօրջում մը, կը մտնէին զիջո-
ղութեանց փուլի մը մէջ, հնչ. կեդ-
րոնը իր 5 կամ 7 անդամներով ուրիշ
բան չէր ըսեր ինձ բայց եթէ Հոռօմի պա-
պին ծիծաղելիօրէն հոչակաւոր դար-
ձած «ոչ կարեմք»ը, non possimus.

Ահա այս կէտին վրայ ասոնց հետ
ունեցած բողոսկոսութիւնս.

Աղեփաւանդրիա, 15 Մայիս 900

« . . . Յատեւածին հրապարակ
հանուելէն վերջը, հարկաւոր անհրա-
ժեշտ է նախ նախատեսելու սրբել, յետոյ
միութեան մասին խորհիլ: Երկու գոր-
ծը զուգնթացաբար չի կրնար կատար-
ւիլ. . . »

Կեդր. վարչութիւն

Լեւոն Բագրեւանդ (*) Ապահունի

Պօսթօն, 17 օգոստ. 900

« . . . Ես կը մտածեմ թէ դուք սը-
խալ մը ըրիք ձեր նախնական առա-
ջարկին մէջ Արփիարին անպայման հե-
ռացումը պահանջելով, քանի որ առ-
ժամեայ դասարան մը երկու կողմի ան-
բաստանեալները դասելու պատշաճ պի-
տի ունենար: Արփիարն ալ յանձնելու
էիք այդ միտնոյն դասարանին. . . »

Յայտնի կը տեսնուի թէ պրն. Փա-
վագեան ինքն է որ չարաչար կը սը-
խալի ինձի վերագրելով սխալ մը գոր-
ծած չեմ: Արփիարը յանձնած չեմ
այդ դասարանին:

Լօնսօն (անթրական)

« . . . Բացարձակապէս որոշեալ են
որ մինչեւ պատւոյ ասեանին վճիռը
չ'արձակուի, ո եւ է համաձայնութիւն
կարելի է միութեան համար, նոյն իսկ
բանակցութիւնները չեն կարող սկսիլ:
Աղեփաւանդրիա երկու կուսակցութեան
մասնահիւղերը կ'ուզէին լսարան մը
հիմնել, իբր սկզբնաւորութիւն եղբայ-
րակցութեան, բայց մերիւնները բացար-
ձակապէս մերժեալ են այս գաղափա-
րը, կեդրոնը յայտարարելով որ մինչեւ
Արփիարի խնդրին լուծումը, որ եւ է
խնդրի համար անկարելի է համաձայ-

(*) Ահա՛ թէ յեղափոխական Պա-
րոնները ինչպէ՛ս կը մըռնեն Միութիւնը:
Մ. Խ.

նութեան յանգիլ, որքան որ պզտիկ ըլլայ այդ խնդիրը...

Ա. Արփիարեան

Այս նամակը չ'ապացուցաներ վարիչներու մեծանձնութիւնը: Ահա մինչեւ ուր հասած էին: Եթէ հայ մը որ, դաւանակցական է, ուզէ լսարան մը հաստատել ուրիշ հայու մը հետ որ հրնչակեան է, Կ. վարչութիւնը կը միջա. մքսէ իսկոյն, այս ազգային եւ անհասական աղէտը արգիլելու համար:

— Ի՞նչ, դու հնչակեան, չե՛ս ամրջնար: Լսարան մի: Չես գիտեր որ նախ Արփիարին խնդիրը լուծելու է եւ յետոյ դուն ուզելու ես կրթիլ կամ կրթել ուրիշները:

Զգացած ըլլալով սկիզբէն իսկ հնչակեան վարիչներուն այս նեղմիտք եւ նեղհոգի տամադրութիւնը, փութացած էի իրենց գրել շատ կանուխէն:

«... Չուզէիք է որ հիմնուիք պրն. Իսկէնէրի եւ Յակոբեանի նամակին գոր ես ինքս իսկ խմբագրած եւ հրատարակած եմ, կարծելու համար թէ դուք, հնչակեաններդ կրնաք անջատել Արփիարի խնդիրը միւս խնդիրներէն: Եթէ այդպէս գործէք, դուք զբաղած կ'ըլլաք Արփիար դասին հարցով, մինչդեռ գործը Արփիարէն վեր է, եւ միակ հարցը որ կայ եւ որով ես կ'ուզեմ զբաղիլ, այն ալ միութեան հարցն է...»

Դարձեալ 4 Մայիս 900

«... Երբ որ միութեան պայմանները ընդունիք ամբողջօրէն, ընդունած կը լինիք նաեւ, դուք երկու կուսակցութիւններդ, դասարանի մը կազմութեան սկզբունքը: Գալով այդ սկզբունքին գործադրութեան, այսինքն դասարանին, այդ ալ ապահովեալ է: Գիտէք որ երկու կուսակցութիւններէն ամէն մին իր յասուկ լիազօրները պիտի ընտրէ, որոնց մէկ պաշտօնն ալ է դասարանը կազմել եւ դասատուներ ընել

սալ: Անվստահ է՞ք միթէ հիմակընէ ձեր ընտրելիք հնչակեան լիազօրներուն: Իր նշանակիչ յեղափոխական, աշխատելու էք որ ոչ մէկ կուսակցութիւնը եւ ոչ միւսը չենթարկի դասապարտութեան մը հաւանականութեան, այլ դասի համեմատ միմիայն հնչակեան անհաս. ները եւ դաւանակցական անհասները — ինչ որ կարելի է միութեան հետ զուգորթացարար: Միութենէ առաջ ուզել դատել՝ այդ կը նշանակէ կուսակցական կռիւ մը շարունակել եւ զիրար խորտակել...»

Հնչակեան վարիչները շարունակեցին ինձի պատասխանել, նախ Արփիար եւ յետոյ Ազգ. Միութիւն, եւ Յեղափոխութիւն:

Հոս կը վերջանայ բանակցութեանցս առաջին մասը, կայ երկրորդ մաս մըն ալ. Բայց այսօրու իսկ հրնչակեան պարզ անդամները եւ հանրաշին կարծիքը—կրնան ձեռնարկել դատելու հնչակեան մէկ քանի վարիչներուն ընթացքը միութեան համար քրած այս փորձիս մէջ: Հոս իս, անկեղծութիւն չ'կար եւ ոչ ալ նա մանաւանդ լրջութիւն:

Այս ընթացքը գրեթէ կասակերզութիւն մը եղաւ որ վարպետ խաղ մ'ըլլալու արժանիքն ալ չունեցաւ:

Ինչպիսիք, պարտն խմբագրութեան, յարգանքս հաւատարմութեան:

ՄԻՒԹԱՐ

ՀՐԱՆԿՆԵՐ ԲԱՅՆՆՈՐԴԱԳՈՒԹԵԱՆ

1887 ժԶ. ՏԱՐԻ 1902

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ...”

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Ուսումնասիրես «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ», կը մտնի իւր գոյութեան 16րդ շրջանը:

Կը հրատարակուի Նոյն Ծրագրով եւ Նոյն Ուղղութեամբ անէն անոյ սկիզբը:

«Հանդես Անսորեայ», Ուսումնաբերքը պիտի բովանդակի այն անէն հետաքրքրական հետազոտողները, որ Հայ Գրականութեան կը հային: Հայ պատմութեան նկատմամբ եղած ուսումնասիրութիւններն Անաշառ ֆենադասութեան պիտի եկարտի: Ըստ պարագայից՝ Բանասիրութեան եւ Լեզուաբանութեան մասն անէի պիտի ընդարձակուի: Հայ ուսման եւ հայ յեղուին վերաբերեալ անէն Ազգային եւ Օտարազգի գիտնական բանասերներու յոյուածները, որ կերպով մը Հայ Ազգին, Հայագիտութեան հետ առնչութիւն ունին, պիտի հրատարակի:

Քերթիս բովանդակութիւնն ինքնագիր պիտի ըլլայ մեծաւ մասամբ, բայց բարգւտանութիւնն ալ պիտի չլակուի Գերմանական գրութիւններն ի մասնաւորի, որ ո՛ր եւ կերպով Հայ անուան հետ կապակցութիւն ունին:

Ուսումնաբերքիս մեջ համով-հոտով «Գրական Քրթակցութիւններ», վերագրիկ սակ նոր բաժին մը պիտի բացուի: Պիտի շարունակուի Ծաղկեփունջը, Գրական Հրատարակ ընդհ. տեսութեան երբեմն երբեմն տեղի տալով: Պիտի ջանակ մը Նոր Գրութեան, Օգտակար Գիտելիքներ գիտական նորութիւններով դասակարգ մը գոհացնել:

Խնթագրութեան որկուած անէն գրեւորու վրայ Բննդասական համաձայն կամ ընդարձակ տեղեկութիւն պիտի տրուի: Բաղաժական Տեսութիւնը, նոյն ընդարձակութեամբ կը շարունակուի:

Քերթիս ծածկը պիտի զարդարուի Ազգային Քերթերու Բովանդակութեան փայտած միայն ազգային նիւթերով: Հունգարահայոց Armenia Քերթին Բովանդակութիւնն ալ պիտի ղենեմ: Յառաջ պիտի տակնի մտնուի Քրթակցութիւն Հանդիսիս մեր բաժանորդաց անձուկ կապը: Իսկ գրական հարցմանը երբեմն Առանձին Յօդուածներով պիտի պատասխանեն:

«Հանդիսիս», կողին վրայ Միայն ա՛յն Քերթերը կը հրատարակեն, որոնք փոխադարձ հրատարակութեան պայմանները կը յարգեն:

ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ:

ՀԱՅՍՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. ԾԱՆՈՒՑՈՒՄ «Երօրայի Հայ Ուսանողական Միութեան»:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱԲԱՆ.

3. ԿՈՉԵՐ ՆՇԱՆԱՌԵ Երօրայիցիների, յօդուս հայերի եւ հայոց հարցի լուծման:

4. ԱԿՆԱՐԿ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ա) Հայերի դերը նախաքրթսոնէական եւ քրթսոնէական քաջանում. բ) Հայերի կոչը փաղափական հարեւանների հետ. գ) Կրօն-եկեղեցի. դ) Հայկական իրաւունքը:

5. ՀԱՅՍՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ա) Քաղաքական (հին եւ այժմեան). բ) Նկարագրական. գ) Հայերի քիւր (ուսումնասիրութիւն). դ) Դրացի ազգեր:

6. ԱՋԳԱԳՐՈՒԹԻՒՆ. — ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ (հայկական բեւեռագրեր): Հայկական գեղարուեստ, հարստապետութիւն.

7. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԼԵՁՈՒ. ա) Հին մասեցագրութիւն. բ) Նոր գրականութիւն. գ) Կովկասեան եւ քիւրփահայերի մամուլի պատմութիւն:

8. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՅԸ եւ նրա պատմական տեսութիւնը:

9. ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ.

ա) Հայերի փաղափական շարժումը թիւրքիայում. բ) Թիւրքահայերի տնտեսական կեանքը. գ) 1850-1900 (պատմական ֆենադասութիւն): դ) Ապստամբութեան քաջանը. յեղափոխութեան գլխաւոր մօտէններ (պատմական ակնարկ): ե) Կոտորածներ. գ) Հայոց հարցը Երօրայի ղիպլօմատիայի առաջ. ա) Պարիզի կօնգրէս. բ) Սան-Ստեփանօ. գ) Բերլինի կօնգրէս. դ) 1895-ի ծրագիր. ե) Պատշտական ակտեր. է) Թիւրք կառավարութեան վերաբերմունքը դէպի հայկական դասը (Քանգիմար

— Խաթրը Հիւմայուն եւ այլ կարգա-
դրութիւններ):

10. ԵՒՐՊՊԱՅԻՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ:

ա) Գրողներ. բ) Պետական գործողներ.
գ) Միսիօնարներ. դ) Ճանապարհորդներ.
ե) Նորագոյն հայաստէրներ (բաղածֆ-
ներ):

11. ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍՍՍՏԱՆՈՒՄ. ցրանց
կասարած դերը 19 – րդ դարու սկզբում:
Զինուորականներ:

12. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅԵՐԸ.

13. ԱԿՆԱՐԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻ ՀԱՅԵ-
ՐԻ ՄԱՍԻՆ:

14. ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ (Բալկան, Ե-
գիպսոս, Ամերիկա, Հնդկաստան, Լե-
հաստան):

15. ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆ (Նեանաուր հա-
յերի եւ հայաստէր եւրոպացիների):

16. ԹԻՒՐԳԱՅ ԼԾԻՑ ԱԶԱՏԱԳՐԻԱԾ
ԵՐԿԻՐՆԵՐ (ազատութեան պայամութիւն
— Յունաստան, Բուլղարիա, Ռումանիա,
Սերբիա, Կրետէ):

17. ՏԵՍԱՐԱՆՆԵՐ. Նկարներ: Լու-

սանյարներ: Հայաստանի քարտէզ:
18. ՀԱՅԵՐԻ ԱՊԱԳԱՅ ԴԵՐԸ ՓՈՔՐ
ԱՍԻԱՅՈՒՄ:

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

Ա Փ Ր Ի Կ Ե Ա Ն

PHARMACIE D'AFRIQUE

Պոյն միամեայ հաստատութիւնը
վերջերս աւելի ճոխացուցած ենք բե-
րել տալով եւրոպական ամեն տեսակ
ընտիր դեղորայք, սրեսիալիթիներ եւ
հանքային թարմ ջուրեր:

Յաճախորդները կրնան ապահով
ըլլալ դեղերուն ինամեալ եւ արագ
պատրաստութեան ու գիներու չափա-
ւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ
օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս
նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու
փորձ մանկաբարձներ:

SALAMANDER

Ս Ա Լ Ա Մ Ա Ն Տ Ը Ր

Ապահովագրական Ընկերութիւն
ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Յ.Ճեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս
նաև Ծովային, Դետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու գէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱԵԱՆ

Աղեփասնորիա, պզտիկ Մեհշիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'Ա Լ Ի Ա Ն Ս

Ծովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ